



Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ

Քննական առարկա 1
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՍԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Քննաթերթ

Հարցեր 1-25	50 միավոր
Խնդիր 1 Բաժին Ա. Բաժին Բ.	16 միավոր 5 միավոր
Խնդիր 2	9 միավոր
Խնդիր 3	9 միավոր
Խնդիր 4	6 միավոր
Խնդիր 5	5 միավոր
Ընդամենը	100 միավոր

Հունվար, 2026թ.

Բազմակի ընտրության 25 հարց: Բոլոր հարցերը պարտադիր են: Յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

Ընդամենը 50 միավոր:

1. Համաձայն ՀՀՄՍ 1–ի, որ հաշվետվություններն է անհրաժեշտ կազմել հաշվեգրման սկզբունքով՝

Ա. Կազմակերպության բոլոր ֆինանսական հաշվետվությունները

Բ. Կազմակերպության եկամտային հարկի հաշվարկը

Գ. Կազմակերպության դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվությունը

Դ. Կազմակերպության բոլոր ֆինանսական հաշվետվությունները, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին տեղեկատվության:

Ա	Ա,Բ
Բ	Բ,Գ
Գ	Գ
Դ	Դ

2. Համաձայն ՀՀՄՍ 1–ի՝ կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման հետևողականությունը սահմանում է, որ.

Ա. Կազմակերպությունը պետք է պահպանի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

– պարզ է, որ նշանակալի փոփոխություն է տեղի ունեցել կազմակերպության գործառնությունների բնույթում, կամ նրա ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկ այլ ներկայացում կամ դասակարգում կլինի ավելի տեղին՝ հաշվի առնելով ՀՀՄՍ 8-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության և կիրառման չափանիշները, կամ ներկայացման փոփոխությունը պահանջվում է ՀՀՄՍ-ներով:

Բ. Կազմակերպությունը պետք է պահպանի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը, բացառապես այն դեպքերում, երբ՝

– պարզ է, որ նշանակալի փոփոխություն է տեղի ունեցել կազմակերպության ղեկավարության կազմում, կամ նրա ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկ այլ ներկայացում կամ դասակարգում կլինի ավելի տեղին՝ հաշվի առնելով կազմակերպության նպատակն է ստանալ առավելագույն շահույթ:

Գ. Համաձայն ՀՀՄՍ 1–ի պարագրաֆ 45–ի Կազմակերպությունը պետք է պահպանի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը և երբևէ չփոխի այն:

Դ. Կազմակերպությունը պետք է պահպանի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ներկայացումը և դասակարգումը մի ժամանակաշրջանից մյուսը, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

– պարզ է, որ նշանակալի փոփոխություն է տեղի ունեցել կազմակերպության գործառնությունների բնույթում, կամ նրա ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ մեկ այլ ներկայացում կամ դասակարգում կլինի ավելի տեղին՝ հաշվի առնելով ՀՀՄՍ 8-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության և կիրառման չափանիշները, կամ ներկայացման փոփոխությունը պահանջվում է խոշոր ներդրողի կողմից:

Ա	Ա
Բ	Բ
Գ	Գ
Դ	Դ

3. Համաձայն «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի ակտիվը որոշելի է, եթե այն՝

- Ա) առանձնացվելի է, այսինքն՝ եթե կարող է առանձնացվել կամ բաժանվել կազմակերպությունից և վաճառվել, փոխանցվել, տրամադրվել լիցենզիայով, տրվել վարձակալությամբ կամ փոխանակվել անհատապես կամ հարակից պայմանագրի, որոշելի ակտիվի կամ պարտավորության հետ միասին՝ անկախ նրանից, թե արդյոք կազմակերպությունը մտադրություն ունի այդպես վարվելու,
- Բ) անկախ նրանից, առանձնացվելի է թե ոչ, եթե կատարվել են ծախսեր, որոնք հնարավոր է արժանահավատորեն չափվել և ընկերության հաշվապահական քաղաքականությամբ սահմանվել է ոչ նյութական ակտիվի բնույթը, այն ենթակա է հաշվառել ոչ նյութական ակտիվ առնվազն հաշվետու տարվա վերջում
- Գ) Ցանկացած ներստեղծված ակտիվ, եթե դրանից կարելի է տնտեսական օգուտներ ստանալ, անվերապահորեն ենթակա է ճանաչման և հաշվառման շուկայական արժեքով
- Դ) առաջանում է պայմանագրային կամ այլ իրավաբանորեն ամրագրված իրավունքներից՝ անկախ նրանից, թե արդյոք այդ իրավունքները փոխանցելի են կամ առանձնացվելի են կազմակերպությունից կամ այլ իրավունքներից ու պարտականություններից:

Ա	Ա և Գ
Բ	Բ և Գ
Գ	Գ և Դ
Դ	Ա և Դ

4. Համաձայն հիմնական միջոցներ ստանդարտ ՀՀՄՍ 16-ի՝ ստորև ներկայացված որ սահմանումը կամ սահմանումներն են ճիշտ,

- Ա) Հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերազնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերազնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:
Վերազնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:
- Բ) Մաշվածության հաշվարկման կիրառվող մեթոդը պետք է արտացոլի այն մոդելը, որը կազմակերպությանը թույլ կտա ֆինանսական հաշվետվություններում արտացոլել առավելագույն շահույթ:

Գ) Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը բացառապես պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում

Դ) Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը պետք է ճանաչվի բացառապես մեկ պայմանի դեպքում, այն է՝ երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն:

Ա	Ա
Բ	Բ և Գ
Գ	Գ և Դ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

5. Նշված գործառնություններից որո՞նք են առաջացնում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվների փոփոխություն

1) Ընկերությունը իրականացրել է ապրանքների ապառիկ վաճառք: Գնորդի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունը չի կատարվել, այն է՝ չի վճարվել 10 օրյա ժամկետում: Համաձայնագիր է ստորագրվել, ըստ որի գնորդը պարտավորվել է վճարել 14 ամսից, իսկ ուշացման դիմաց էլ՝ հավելյալ գումար:

2) Հաշվետու տարում առաջացել է հետաձգված հարկային ակտիվ:

3) Ընկերությունը մասնագիտացած է մարդատար օդանավների արտադրությամբ և վաճառքով, որոնց օգտակար ծառայության ժամկետը գնահատվում է 20 տարի: Տարեվերջին նա ավարտին է հասցրել 2 օդանավի պատրաստման աշխատանքները:

4) Ընկերությունը մասնագիտացած է արժեթղթերի առքուվաճառքով: Տարեվերջին գնել է 10 տարվա մարման ժամկետ ունեցող պարտատոմսեր:

	Ընթացիկ ակտիվներ	Ոչ ընթացիկ ակտիվներ
Ա	–	1,2,3,4
Բ	–	1,3,4
Գ	3,4	1,2
Դ	2	1,4

6. Կազմակերպությունը 2020թ հունվարի 1–ին ստացել է փոխառություն 1 մլն ՀՀ դրամի չափով, 5 տարի մարման ժամկետով, տարեկան հավասարաչափ մարումների ձևով, մարման օրը՝ յուրաքանչյուր տարվա 31 դեկտեմբերին, և տարեկան 10%՝ մնացորդի տոկոսագումար վճարելու պայմանով: Ամսեկան տոկոսագումարների գծով վճարման օր է նախատեսվում հաջորդ ամսվա 5-ը, որը կազմակերպությունը պարտաճանաչ կերպով իրականացնում է: 2023թ.-ից սկսած կազմակերպությունը փոխառության

մայր գումարի գծով պարտավորությունը չի կատարում: Լրացուցիչ համաձայնագրով փոխառության ամբողջական մարման օր է սահմանվում 31 դեկտեմբերի 2025թ:

Որքան է կազմել առ 31.12.2024թ դրությամբ փոխառության գծով կազմակերպության պարտավորությունը, ինչպես նաև տոկոսագումարների գծով ամբողջական ծախսը՝ այդ թվում լրացուցիչ համաձայնագրով սահմանված ժամանակահատվածի համար ՀՀ դրամով փոխառության ողջ գործողության ժամանակահատվածի համար:

	Փոխառության գծով	Տոկոսագումարի գծով
Ա	800000	300000
Բ	400000	320000
Գ	400000	360000
Դ	360000	300000

7. Կազմակերպության պաշարների մնացորդը 2024թ տարեվերջի դրությամբ կազմել է 1250 հատ, յուրաքանչյուրի ինքնարժեքը՝ 2000 ՀՀ դրամ: Շուկայագետները հայտնում են, որ այդ պաշարների միավորը հնարավոր կլինի իրացնել 3000 ՀՀ դրամ վաճառքի արժեքով՝ ներառյալ 20% վաճառքից հարկը կամ ԱԱՀ –ն: Նշված խմբաքանակի իրացման հետ կապված ծախսերը կկազմեն 650 000 ՀՀ դրամ:

Ի՞նչ արժեքով է պետք հաշվառել պաշարների միավորը 2024թ հաշվառվի Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ համաձայն ՀՀՄՍ 2 Պաշարներ ստանդարտի:

Ա	2500 դրամ
Բ	1980 դրամ
Գ	2000 դրամ
Դ	3000 դրամ

8. Կազմակերպությունը դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը անուղղակի մեթոդով կազմելիս ստորև ներկայացված հոդվածներից որոնք է օգտագործում և ցուցադրում հաշվարկի մեջ համաձայն ՀՀՄՍ 7-ի՝

- ա) զուտ շահույթը / շահույթ հարկումից հետո
- բ) ստացված շահաբաժին
- գ) պաշարներ
- դ) հասույթ
- ե) հիմնական միջոցների ձեռք բերում
- զ) դրամական միջոցների փոխարժեքային տարբերությունը
- է) վճարված շահութահարկը
- ը) կրեդիտորական պարտքեր
- թ) ստացված վարկեր
- ժ) վճարված տոկոսներ

Ա	Ա,Բ,Գ,Դ,Ը,Ժ
Բ	Բ,Գ,Դ,Ե,Ը,Թ

Գ	Բ,Գ,Ե,Է,Ը,Թ,Ժ
Դ	Բոլորը ճիշտ են, բացառությամբ Դ-ի

9. Ինչպիսի՞ փոփոխություն տեղի կունենա կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների մեջ ընթացիկ ակտիվների բաժնում՝ ստորև բերված տեղեկատվության ճշգրտումներից հետո՝

1. 200,000՝ 11 ամսով տրամադրված փոխառության մասով որևէ գրանցում չի տրվել,
2. 130,000՝ անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքի դուրս գրումը չի գրանցվել,
3. Բանկային հաշվի մնացորդը 450,000 դրամով պակաս է գրանցվել,
4. 15 000,800 սկզբնական արժեք ունեցող վարչական նշանակության շենքի գծով մաշվածություն չի հաշվարկվել (10 % դրույքաչափով գծային մեթոդով, սարքավորման մնացորդային արժեքը 0 է),
5. Տարեվերջին ձեռք է բերվել 1,250,000 դրամ սկզբնական արժեքով լիցենզիա՝ մատակարարից հետաձգված վճարման պայմանով, սակայն գործարքը չի գրանցվել: Օգտագործման իրավունք՝ 5 տարի
6. Վճարվել է աշխատավարձի գծով պարտավորությունը 2500,000 դրամի չափով , որի ձևակերպումը չի տրվել
7. Պարզվել է ,որ վերադարձվել է մատակարարված ապրանքներից 1200,000 դրամի ինքնարժեքով ,որի վաճառքի արժեքը կազմել է 1300,000 դրամ:

Ա	12720,800 աճ
Բ	2080,000 նվազում
Գ	1030,000 նվազում
Դ	2280,000 նվազում

10. Ստորև ներկայացված է քաղվածք ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից՝

Շենք՝ հաշվեկշռային արժեք՝ 1 905,000 հազ.դրամ
Կուտակված մաշվածություն՝ 208,000 հազ.դրամ

2024թ.-ի հոկտեմբերի 1-ին առաջին անգամ շենքը վերագնահատվել է և արժեքը աճել է, կազմելով՝ 2 512,500 հազ.դրամ: Շենքի օգտակար գործողության ժամկետ է սահմանված եղել 50 տարի,իսկ մաշվածության մեթոդը՝ գծային : Շենքի մնացորդային արժեքը 0 է:

**Որքա՞ն կկազմի մաշվածության գծով ծախսը 2024թ.-ի դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա Ֆինանսական արդյունքի մասին
հաշվետվությունում հազ.դրամ**

Ա	41137,5
Բ	48257,5
Գ	44257,5
Դ	43257,5

11. «Ֆինանսական հաշվետվությունների համախմբում»՝ ՀՀՄՍ 10-ի համաձայն, որ սահմանումը կամ սահմանումներն են բնութագրում չվերահսկվող բաժնեմասը և նրա կիրառությունը՝

Ա) Կազմակերպությունը պետք է վերագրի շահույթը կամ վնասը և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի յուրաքանչյուր բաղադրիչ մայր կազմակերպության սեփականատերերին և չվերահսկող բաժնեմասերին: Կազմակերպությունը պետք է նաև վերագրի ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքը մայր կազմակերպության սեփականատերերին և չվերահսկող բաժնեմասնակցություններին, նույնիսկ եթե դա հանգեցնի չվերահսկող բաժնեմասնակցություններում պակասորդային մնացորդի:

Բ) Դուստր կազմակերպությունում մայր կազմակերպության սեփականության բաժնեմասի փոփոխությունները, որոնք չեն հանգեցնում մայր կազմակերպության կողմից վերահսկողության կորստի, սեփական կապիտալի գործարքներ են (այսինքն, գործարքներ սեփականատերերի հետ, երբ վերջիններս հանդես են գալիս որպես սեփականատերեր):

Գ) Սեփական կապիտալը դուստր կազմակերպությունում, որը վերագրելի չէ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն մայր կազմակերպությանը, հանդիսանում է չհսկվող բաժնեմաս

Դ) Մայր կազմակերպությունը պետք է չվերահսկող բաժնեմասերը ներկայացնի ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես սեփական կապիտալի հոդված՝ մայր կազմակերպության սեփականատերերի սեփական կապիտալից առանձին:

Ա	Ա Բ, Գ
Բ	Ա և Գ
Գ	Ա, Գ, Դ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

12. Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր 31-ի դրությամբ: Տնօրենների խորհրդի կողմից վավերացվում են հաջորդ տարվա ապրիլի 5-ին և հրապարակվում՝ հունիսի 20-ին: Ստորև նշվածներից ո՞րն է հանդիսանում հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպք համաձայն ՀՀՄՍ 10-ի՝

Ա. Ընկերությունը բաժնային գործիքներ տիրապետողներին շահաբաժիններ է հայտարարվել հունվարի 19-ին:

Բ. Մինչև հաշվետվությունների հրապարակումը ստուգումների արդյունքում հայտնաբերվել են սխալ ձևակերպումներ, որոնք վերաբերվում են նախորդ տարվան խեղաթյուրում են հաշվետվությունների արժանահավատությունը :

Գ. Դատական գործի կարգավորումը հաշվետու ժամանակաշրջանից հետո, որը հաստատում է, որ կազմակերպությունը ուներ ներկա պարտականություն հաշվեկշիռի ամսաթվի դրությամբ:

Դ. Խոշոր արտադրական գործարանի ոչնչացում հրդեհի հետևանքով՝ հաշվեկշիռի ամսաթվից հետո:

Ա	Ա,Բ,Գ
Բ	Բ,Գ,Դ
Գ	Բ,Գ
Դ	Բոլորն էլ համարվում են ճշգրտող դեպք

13. Գների նվազման պայմաններում, եթե ընկերությունը որոշի պաշարների ինքնարժեքի հաշվառման կշռված միջին մեթոդից անցնել Առաջին մուտք, առաջին ելք մեթոդին, ապա դրա հետևանքով ստորև նշված հաշիվներում ինչպիսի՞ փոփոխություններ տեղի կունենան՝

	Վաճառքի ինքնարժեք	Շահույթ	Պաշարների վերջնական մնացորդ
Ա	Ավելի ցածր	Ավելի բարձր	Ավելի բարձր
Բ	Ավելի բարձր	Ավելի ցածր	Ավելի ցածր
Գ	Ավելի բարձր	Ավելի ցածր	Ավելի բարձր
Դ	Ավելի բարձր	Ավելի բարձր	Ավելի ցածր

14. Համաձայն հիմնական միջոցներ ստանդարտ ՀՀՍՍ 16-ի՝ ստորև ներկայացված որ սահմանումը կամ սահմանումներն են ճիշտ,

Ա) Հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

Բ) Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝

ա) առկա են ապրանքների կամ ծառայությունների արտադրության (մատուցման) կամ մատակարարման, այլ կողմերին վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար,

բ) և ակնկալվում է օգտագործել ավելի քան մեկ ժամանակաշրջանի ընթացքում:

Գ) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպության խոշոր հիմնադրին

Դ) Հիմնական միջոցի միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, պետք է չափվի այն արժեքով, որը ակնկալվում է հետ ստանալ նրա օգտագործումից:

Ա	Ա և Բ,
Բ	Բ և Գ
Գ	Գ և Դ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

15. Համաձայն ՀՀՄՍ 7-ի, այն է «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին», ստորև նշվածներից որոնք են բնորոշվում որպես գործառնական գործունեություն՝

Ա) շահութահարկի գծով դրամական միջոցների վճարումները կամ հետստացումները, բացառությամբ եթե դրանք կապված չեն ֆինանսավորման կամ ներդրումային գործունեության հետ

Բ) աշխատակիցներին և նրանց անունից դրամական վճարումները

Գ) դրամական վճարումները սեփականատերերին՝ կազմակերպության բաժնետոմսերը ձեռք բերելու կամ մարելու համար.

Դ) հիմնական միջոցների, ոչ նյութական և այլ երկարաժամկետ ակտիվների ձեռքբերման համար դրամական վճարումները: Դրանք ներառում են սեփական ուժերով կառուցված հիմնական միջոցների և զարգացման աշխատանքների վրա կապիտալացված ծախսումների հետ կապված վճարումները.

Ե) այլ կազմակերպությունների բաժնային և պարտքային գործիքների ձեռքբերման, ինչպես նաև համատեղ ձեռնարկումների համար դրամական վճարումները (բացի այն գործիքների դիմաց վճարումներից, որոնք համարվում են դրամական միջոցների համարժեքներ, կամ որոնք պահվում են դիվերային կամ առևտրական նպատակներով).

Չ) ստացված փոխառությունների՝ դրամական միջոցներով մարումները.

Ե) այլ կողմերին տրամադրված փոխատվությունների վերադարձումից և վարկերի մարումից դրամական մուտքերը (բացի ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված փոխատվություններից և վարկերից).

Ը) ապրանքների (արտադրանքի) վաճառքից և ծառայությունների մատուցումից ստացված դրամական միջոցների մուտքերը.

Ա	Ա,Բ,Գ
Բ	Ա,Դ,Ե
Գ	Ա,Բ,Ը
Դ	Բ,Չ,Ե

16. Ստուգմամբ բացահայտվել են հաշվապահական սխալներ, մասնավորապես կազմակերպության փորձնական հաշվեկշռի դեբետային մասը գերազանցել է կրեդիտայինին՝ 12000 չափով:

Նշվածներից որը կարող է նման անհամապատասխանության պատճառ հանդիսանալ՝

Ա	12000 –ի չափով իրացման ձևակերպումը բացակայել է
Բ	12000–ի չափով ծախսերը չեն ներառվել ինքնարժեքում, այլ վարչական ծախսերում են ներառվել
Գ	6000–ի չափով դեբիտորին տրամադրված գեղչը ձևակերպվել է որպես դեբետային պարտավորության աճ
Դ	6000–ի չափով բանկային վարկի մարումը չի ձևակերպվել

17. Հայտնի է կազմակերպության պաշարների և իրացման քաղաքականության մասին հետևյալ տեղեկատվությունը՝

Պաշարների սկզբնական մնացորդ: 68.500

Գնումներ : 74.500

Իրացումից հասույթը՝ ինքնարժեքից 20% շահութաբերությամբ: 120.000

Որքան կկազմի պաշարների վերջնական մնացորդը՝

Ա	43000
Բ	47000
Գ	23000
Դ	41000

18. Ընկերությունն իր հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ նախատեսել է կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստի ստեղծում՝ տարեվերջին դեբիտորական պարտքերի մնացորդի 3%–ի չափով, անկախ տարվա ընթացքում կատարված դուրսգրումներից:

Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստը 2024թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում էր 555,000 ՀՀ դրամ: 2025թ.-ի ընթացքում վաճառքը կազմել է 45,200,000 ՀՀ դրամ, տարվա ընթացքում դեբիտորական պարտքերի մարումից մոտքերը կազմել են 47,500,000 ՀՀ դրամ, իսկ 285,300 ՀՀ դրամի դեբիտորական պարտքեր են դուրս գրվել որպես անհուսալի: **Որքան չափով կարտացոլի ընկերությունը 2025թ.դեկտեմբերի 31–ին կասկածելի դեբիտորական պարտքերի հաշիվը, եթե հայտնի է, որ վաճառքից հաշվեգրվող հարկերը կազմում են 20%:**

Ա	200700
Բ	269700
Գ	216300
Դ	486000

19. Ստորև գործարքները առանձնացված կերպով ներկայացնել ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ որպես ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգմամբ:

1	Հաշվապահական ծրագրի փոքր փաթեթի գնում
2	Հետաձգված հարկային ակտիվի ճանաչում
3	Երկարաժամկետ արժեթղթերի գծով տարեկան շահաբաժնի հայտարարում
4	Նախորդող տարվան վերաբերվող սպառված գազի գծով պարտավորություն
5	Տարվա շահութահարկի վճարում
6	Աշխատավարձի հաշվեգրում՝ ընկերության պարտավորությունների 90 % գերազանցող գումարի չափով
7	Երկարաժամկետ վարկի գծով ամսեկան տոկոսի մարում
8	Գործուղում գևացող աշխատակցին առհաշիվ գումարի տրամադրում՝ 300000ՀՀ դրամը գերազանցող գումարի չափով

	Ընթացիկ	Ոչ ընթացիկ
Ա	1,5,6,7	2,3,4,7,
Բ	1,6,8	2,3,4,5,7
Գ	3,4,5,6,7,8	1,2,
Դ	2,3,4,7	1,5,6

20. Կազմակերպությունը 1,200,000 դրամով ձեռք բերված ապրանքները վաճառել է 1,500,000 դրամով: Այս գործարքների հետևանքով ինչպիսի փոփոխություններ տեղի կունենան կազմակերպության ֆինանսական հաշվետվություններում:

Ա. Հասույթը և սեփական կապիտալը կավելանան 300,000 դրամով:

Բ. Ապրանքների վաճառքի ինքնարժեքը կավելանա 1,200,000 դրամով և սեփական կապիտալը կավելանա 1,500,000 դրամով:

Գ. Ապրանքների հաշվեկշռային արժեքը կնվազի 1,200,000 դրամով և հասույթը կավելանա 1,500,000 դրամով:

Դ. Սեփական կապիտալը կավելանա 300,000 դրամով

Ա	Ա
Բ	Բ
Գ	Գ,Դ
Դ	Դ

21. ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» ստանդարտի համաձայն՝ կապակցված կողմեր չեն կարող համարվել՝

Ա. Մայր կազմակերպության երկու դուստր կազմակերպությունները:

Բ. Ֆիզիկական անձը և կազմակերպությունը, եթե ֆիզիկական անձը նշանակալի ազդեցություն ունի կազմակերպության նկատմամբ:

Գ. Երկու կազմակերպություններ զուտ այն պատճառով, որ նրանք ունեն ընդհանուր տնօրեն:

Դ. Կազմակերպությունը և իր առանցքային կառավարչական անձնակազմի անդամը:

Ա	Ա
Բ	Ա,Բ
Գ	Գ
Դ	Բոլորն էլ

22. Ստորև նշվածներից ո՞րն է արտացոլում ընկերության հաշվետու ժամանակաշրջանի զուտ շահույթը՝

Ա. Չուտ ակտիվների վերջնական մնացորդ – վճարված շահաբաժիններ – ներդրված կապիտալ – զուտ ակտիվների սկզբնական մնացորդ

Բ. Չուտ ակտիվների վերջնական մնացորդ – հայտարարված շահաբաժիններ – ներդրված կապիտալ – զուտ ակտիվների սկզբնական մնացորդ

Գ. Չուտ ակտիվների սկզբնական մնացորդ + հայտարարված շահաբաժիններ – ներդրված կապիտալ – զուտ ակտիվների վերջնական մնացորդ

Դ. Չուտ ակտիվների վերջնական մնացորդ + հայտարարված շահաբաժիններ - ներդրված կապիտալ – զուտ ակտիվների սկզբնական մնացորդ

Ա	Ա
Բ	Բ
Գ	Գ
Դ	Դ

23. ՀՀՄՍ 37-ի համաձայն ստորև բերված դրույթներից ո՞րն է ճիշտ՝

Ա. Պարտավորեցնող դեպքը հանգեցնում է իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք կազմակերպությունը չունի:

Բ. Պայմանական պարտավորության բացահայտում չի պահանջվում, եթե մոտ ապագայում տնտեսական օգուտների արտահոսք չի ակնկալվում:

Գ. Պայմանական ակտիվը հնարավոր ակտիվ է որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է ապագա, կազմակերպության կողմից չվերահսկվող, անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ տեղի չունենալով:

Դ. Պարտավորությունը ճանաչելու համար անհրաժեշտ է, որ ոչ միայն առկա լինի ներկա պարտականություն, այլև հավանական լինի այդ պարտականությունը մարելու համար տնտեսական օգուտների մարմնավորող միջոցների արտահոսք և պարտավորության գումարը հնարավոր լինի արժանահավատորեն գնահատել:

Ա	Ա,Բ,Գ
Բ	Ա,Գ
Գ	Բ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

24. Կազմակերպությունը ստանում է եկամուտներ վարձավճարի տեսքով: Տարեկան վարձավճարը կազմում է 1,440,000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն 20%: Ծառայությունը սկսվել է մատուցվել 2025թ փետրվարի 1-ից:

2025թ դեկտեմբերի հաշիվը դուրս է գրվել 2026թ մարտի 10-ին:

Նշված կազմակերպությունը 2025թ ընթացքում, սկսած հունվարի 1-ից, որպես իր գործառնական գործունեության ծախս, ամսական ստացել է տարբեր ծառայությունների հաշիվներ՝ 60,000 ՀՀ դրամի չափով, իսկ որպես ներդրումային գործունեության ծախս՝ ամսական 5500 ՀՀ դրամի չափով: Ստուգմամբ բացահայտվել է, որ 2024թ դեկտեմբեր ամսվա ստացված ծառայության հաշիվներից մեկը՝ գումարային 25,000 ՀՀ դրամի չափով, ուշ է ստացվել և մնացել է չվճարված առ 31.12.2025թ.-ին:

Որոշել 2025թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը:

Ա)	314000
Բ)	534000
Գ)	289000
Դ)	214000

25. Ստորև ներկայացրածներից որո՞նք են համապատասխանում ՀՀՄՍ-ների և ՖՀՄՍ-ների դրույթներին՝

Ա) Պաշարներ. այն ակտիվներն են, որոնք՝

- պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար,
- արտադրության ընթացքում են նման վաճառքի համար,
- հումքի կամ կյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Բ) Անոցիացված կազմակերպությունը կազմակերպություն է, որի նկատմամբ ներդրողն ունի նշանակալի ազդեցություն:

Գ) Կազմակերպությունը պետք է դասակարգի հետաձգված հարկային պարտավորությունները որպես ընթացիկ, անկախ այն ժամանակաշրջանից, որի ընթացքում անկալվում է հակադարձել ժամանակավոր տարբերությունները:

Դ) Սեփական կապիտալը մնացորդային տարր է այսինքն, կազմակերպության ակտիվների մնացորդային բաժինն է՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո: Սակայն այն կարող է ենթադասակարգվել կապիտալի և պահուստների տարբեր տեսակների: Դրանք կարող են արտացոլել իրավական սահմանափակումները կամ բազմազան սեփականատերերի տարբեր իրավունքները:

Ա	Ա,Գ
Բ	Բ,Գ,
Գ	Ա,Բ,Դ
Դ	Բոլորն էլ ճիշտ են

Բաժին 2

Բոլոր խնդիրները պարտադիր են

Խնդիր 1 / Հաշվապահական ձևակերպումներ, ֆինանսական հաշվետվություններ/

«Բելմոնտ» ընկերության հաշվապահը կազմել է 2025թ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը: Առկա իրականացնող ընկերությունը բացահայտել է, որ նշված հաշվետվությունը կազմված է թերություններով և ենթակա է ճշգրտման : Կից ներկայացված ծանոթագրություններում նշվել են ճգրտման ենթակա հոդվածները և նկարագրվել դրանց բովանդակությունը և առաջարկություն է կատարվել վերանայելու այն:

Բաժին Ա)

Պահանջվում է ներկայացնել ճշգրտվող հաշվապահական գործառնությունները և կազմել ճգրտված ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ առ 31.12.2025թ դրությամբ:

(16 միավոր)

Պարտադիր չէ, որ հաշիվների համարները և անունները համապատասխանեն օրինակելի հաշվային պլանին: Կարևորը՝ հաշվի անվանման բովանդակությունը ճիշտ լինի, և հաշվային պլանի ընդհանուր կառուցվածքին համապատասխան լինի:

Կարող են օգտագործվել երկրորդ կարգի հաշիվները (ենթահաշիվները):

«Բելմոնտ» ընկ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ				
31 դեկտեմբերի 2025թ.			հազ. դրամ	
	Ծանոթա գրություն	2025 (Չստորագրված)	2024 (ստորագրված)	
ԱԿՏԻՎՆԵՐ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ		150877	117250	
Այդ թվում`				
Շենք, շինություն	1	66043	73200	
Արտադրական սարքավորումներ	2	55207	44050	
Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	1	29627		
Ոչ կյուրական ակտիվներ	4	31550	6650	
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		182427	123900	
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	3	21430	13200	
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	6,8,10	36875	19500	
Տրված կանխավճարներ		8188	26880	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ		54525	14320	
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		121018	73900	
ՀԱՇՎԵԿՇԻՌ		303445	197800	
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ				
Սեփական միջոցներ				
Բաժնետիրական կապիտալ		50	50	
Զբաղիված շահույթ	9	74490	85080	
Ընդամենը սեփական միջոցներ		74540	85130	
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ		155000	20000	

Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		155000	20000	
Ընթացիկ պարտավորություններ				
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ		6500	18500	
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	5	18500	11500	
Ստացված կանխավճարներ		24000	1225	
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	10	14000	17320	
Կրեդիտորական պարտք աշխատավարձի գծով		9985	7765	
Այլ ընթացիկ պարտավորություններ	12	920	16360	
Պարտքեր շահաբաժինների գծով	7		20000	
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		73905	92670	
Ընդամենը պարտավորություններ		228905	112670	
Հաշվեկշիռ		303445	197800	

Ծանոթագրություններ:

1. 2025թ Փետրվարի 1–ին մեկնարկ է տրվել նոր արտադրամասի համար անհրաժեշտ շինության կառուցումը, որի ֆինանսավորման համար ներգրավվել է վարկ 01.02.25թ–ին, տարեկան 24% տոկոսադրույքով, 16 մլն ՀՀ դրամի չափով, որը մարվել է 31.12.2025թ–ին: Արտադրամասը մատչելի է եղել օգտագործման 31.10.2025թ ից, օգտակար ծառայության ժամկետը 25 տարի է և 2025թ. փաստացի արտադրանքի թողարկում չի ունենում , իսկ պաշտոնական բացման միջոցառումը՝ հյուրերի և լրագրողների մասնակցությամբ, կատարվել է 30.11.2025թ ին:

«Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ» հաշվի քաղվածք ներկայացված է ստորև և իրենից ներկայացնում է վերը նշված արտադրամասի ձևակերպումները միայն՝

- Ա) Շինարարությանը մասնակցած աշխատողների աշխատավարձ՝ 12550000
- Բ) Տեղանքի նախապատրաստման ծախսեր՝ 4500000
- Գ) Նյութեր ՝8502000
- Դ) Վարկի գծով տոկոսներ՝ 3520000
- Ե) Գերնորմատիվային նյութական ծախսումներ՝ 450000
- Չ) Նոր արտադրամասում արտադրվող ապրանքի գովազդի ծախսեր՝105000

2025թ. փաստացի արտադրանքի թողարկում նշված արտադրամասից չի կատարվել:

2. Ընկերությունը իր հարևանությամբ գտնվող գյուղի բնակիչների համար իրենց իսկ համայնքային նշանակության տարածքում կառուցել է ջրատար և հանձնել է նշված համայնքին: Դա կատարվել է գյուղի բնակիչների կողմից ոռոգման աշխատանքներին օժանդակելը: Ջրատարը նախատեսված է եղել շահագործել 10 տարի և ավարտական աշխատանքները կատարվել են 30.09.25թ–ին: Հաշվապահը 16 մլն դրամի չափով ջրատարի կառուցման վրա կուտարված ծախսերը ձևակերպել է որպես հիմնական միջոց՝ արտադրական սարքավորումներ հաշվի վրա: Մաշվածք չի հաշվարկել:
3. Տարեվերջին պաշարների գույքագրման արդյունքում պարզվել է, որ 3 մլն ինքնարժեքով հաշվառված ապրանքները 2026թ ընթացքում հնարավոր է իրացնել 4,8 մլն իրացման արժեքով՝ ներառյալ վաճառքից հարկերը 20% չափով: Նշված խմբաքանակի իրացման ծախսերը նախատեսվում է ,որ կկազմեն 0,8 մլն:
4. 2025թ–ին կազմակերպության ղեկավարությունը արձանագրում է ,որ վերջին տարիների գործունեության ընթացքում ձևավորված հաճախորդ–գնորդների բազան մեծ խթան է հանդիսանում ինչպես հիմնական արտադրատեսակների կայուն իրացումը ապահովելու համար, այնպես էլ նոր արտադրատեսակները շուկա մուտք անելիս: Որոշում է կայացվել նույն գործունեության ապահովման համար որպես ոչ նյութական ակտիվ ճանաչել նշված բազան: Հաշվապահը 2024թ համախառն հասույթի 5% ի չափով ակտիվ է ճանաչել ի հաշիվ գործառնական այլ եկամտի, 5 տարվա օգտագործման արժեքով, 30.04.2025թ ին: 2024թ հասույթը կազմել է 550 մլն: Ամորտիզացիայի հաշվարկ չի կատարել:
5. 2025թ–ի 3-րդ եռամսյակին մատուցված գովազդի ծառայության հաշիվը ստացվել է 2026թ–ին: Հաշվապահը 3 մլն դրամի պարտավորությունը հաշվեգրել է 2026թ ին:

6. 2026թ հունվարին դատարանից վկայություն է ստացվել առ այն,որ 6 մլն դեբիտորական պարտք ունեցող գևորդը սնանկ է ճանաչվել: Հաշվապահը տեղեկատվության ստացման օրը դուրս է գրել տվյալ դեբիտորական պարտքը:
7. 2025թ–ի մայիսին նախորդ տարվա ֆինանսական արդյունքի հիման վրա հայտարարվել է 5մլն դրամի չափով շահաբաժին և չի վճարվել:Այս հոդվածով այլ որոշումներով պարտավորություն չի ունի:
8. Որոշում է կայացվել ձևավորել դեբիտորական պարտքերի պահուստաֆոնդ՝ դեբիտորական պարտքի մնացորդի 3 % ի չափով:
9. Պահանջվում է ղեկավարությանը ներկայացնել Չբաշխված շահույթի հոդվածի ճշգրտումների մասով քաղվածքը կամ S հաշիվը:
10. Ստուգման արդյունքում հայտնաբերվել է 2025թ ընթացքում կազմակերպության կողմից կնքված 4 մլն գումարի չափով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցման ակտ,որը հաշվապահի կողմից ձևակերպված չի եղել:
11. 2025թ հաշվետու տարվա համար հաշվեգրվել է 8 մլն շահութահարկ,որը վճարվել է 2026թ ապրիլին:
12. 2025թ ղեկտեմբերին վճարվել է աշխատակցին 850 հազ. արձակուրդային գումար հունվարի համար:Հաշվապահը ձևակերպել է դեբետային հաշիվ ընտրելով «Այլ ընթացիկ կրեդիտորական պարտավորություններ» հաշիվը:

(16 միավոր)

Խնդիր 1 ,բաժին Բ)

Պահանջվում է հաշվարկել Բաժին 1 –ում ներկայացված «Բելմոնտ» ընկերության ստորև պահանջվող ցուցանիշները,համապատասխանաբար 2024թ և 2025թ համար,հաշվի առնելով նաև ստորև քաղվածքում ներկայացված տեղեկատվությունը՝

	2024թ (հազար)	2025թ (հազար)
Հասույթ	189500	178650
Ինքնարժեք	(158955)	(149899)

- Համախառն շահույթի տոկոս
- կրեդիտորական պարտքերի շրջապտույտի միջին տևողությունը ,
- ընթացիկ իրացվելիության գործակիցները,
- արագ իրացվելիության գործակիցները
- դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից՝

Ցուցանիշները կարելի է ներկայացնել ամբողջական թվերով, ինչպես նաև ստորակետից հետո մեկ կամ երկու նիշով արտահայտված:

(5 միավոր)

Խնդիր 2.

Բաժին Ա : Դրամական միջոցների հոսքեր

Ստորև բերված Է «ԲԱԿ» ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (հազ. դրամ)

	31.12.2025թ.	31.12.2024թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	23,780	26,950
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	23,780	26,950
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	5,282	3,950
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	3,199	1,650
Դրամական միջոցներ	6,481	152
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	14,962	5,752
Ընդամենը ակտիվներ	38,742	32,702
Սեփական կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	15,507	12,667
Էմիսիոն եկամուտ	1,500	1,500
Զբաղիված շահույթ	1,830	100
Ընդամենը սեփական կապիտալ	18,837	14,267
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Երկարաժամկետ վարկեր	5,580	2,720
Ընթացիկ պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	2,830	3,410
Պարտավորություններ բանկային տոկոսների գծով	3,950	2,510
Պարտավորություններ շահաբաժինների գծով	1,800	1,100
Պարտավորություններ շահութահարկի գծով	3,125	3,595
Ստացված կանխավճարներ	2,620	5,100
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	14,325	15,715
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	38,742	32,702

Պատրաստել ընկերության «Դրամական հոսքերի մասին» հաշվետվությունը 2025 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար (անուղղակի մեթոդով) համաձայն ՀՀՄՍ 7-ի՝ հաշվի առնելով ստորև ներկայացված լրացուցիչ տեղեկությունները:

(9 միավոր)

Լրացուցիչ տեղեկություններ՝

1. 2025թ ընթացքում հաշվարկվել է հիմնական միջոցների մաշվածքի գումար՝ 1,800 հազ. դրամ:
2. Բացահայտվել է, որ 5,000 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցը ամորտիզացիայի հաշվարկին չի մասնակցել: Այն նախատեսված էր շահագործել 5 տարի:
3. Հաշվետու տարվա ընթացքում իրացվել է 650 հազ. սկզբնական արժեքով, 280 հազ. կուտակված մաշվածությամբ հիմնական միջոցը, 400 հազ. վաճառքի արժեքով:
4. Հաշվետու տարում համախառն շահույթը կազմել է 3150 հազ. դրամ, ֆինանսական ծախսը՝ 700 հազ. դրամ, շահութահարկը՝ 620 հազ.:
Շահութահարկի գծով առաջացող դրամական միջոցների հոսքերը պետք է բացահայտվեն առանձին և դասակարգվեն որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական միջոցների հոսքեր, քանի որ դրանք չեն կարող կոնկրետ որոշակիացվել ֆինանսավորման կամ ներդրումային գործունեություններից որևէ մեկի հետ:
5. Տարվա ընթացքում հայտարարվել են 800 հազ. դրամի շահաբաժիններ, իսկ վճարված շահաբաժինները ներկայացվում են գործառնական գործունեության մեջ

Խնդիր 3:

Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն, Սեփական կապիտալի մասին հաշվետվություն, մասնակիցների բաժնեմասերի կիրառություն փոքր ընկերակցության օրինակով:

Ստորև ներկայացված է «Էրեբունի» ընկերակցության վերաբերյալ տեղեկատվությունը:

Քաղվածք:

Մասնակիցներ	Ներդրման գումարային չափը առ 01.01.24թ	Ներդրման գումարային չափը առ 01.07.24թ
Արամ	85000	91000
Անի	42000	44000
Աշոտ	61000	40000
Ընդամենը	188000	175000

1. Մասնակիցները իրենց ներդրված կապիտալի չափի 4% -ի չափով հաստատուն եկամուտ են ստանում:
2. Շահույթ/վնասը բաժանում են 2:2:1 հարաբերակցությամբ: 2024թ ավարտվող տարվա համար բաշխումը կատարվել է , սակայն վճարումը `ոչ:
3. Շրջանառու միջոցների ավելացման նպատակով ընկերությունը իր մասնակիցներից մեկից՝ Աշոտից, ներգրավվել է փոխառություն՝ 50000 չափով, 2024թ օգոստոսի 1 ին, տարեկան 6% դրույքաչափով:
4. Մասնակիցներից Արամը ներգրավված է ընկերության ընթացիկ աշխատանքներում

և ստանում է աշխատավարձ տարեկան 25000–ի չափով:
5. 2024թ ընթացքում ստացել է հասույթ 185000, իրացված պաշարների զուտ ինքնարժեքը կազմել է 104000:

Պահանջվում է կատարել հաշվարկները և պատրաստել ու ներկայացնել հետևյալ հաշվետվությունները՝
ա/ շահույթի կամ վնասի հաշվետվությունը 2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար: (4 միավոր)
բ/ սեփական կապիտալի մասին հաշվետվությունը 2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ, ներառյալ մասնակիցների բաժնեմասերի գծով մնացորդները: (5 միավոր)

(Ընդամենը 9 միավոր)

Խնդիր 4.

Համաձայն ՀՀՄՍ 8–ի այն է՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», նկարագրել, բնութագրել, սահմանել, թե որն է հանդիսանում՝

1. Ստանդարտի կիրառության ոլորտը և նպատակը:
2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:
3. Կազմակերպության ղեկավարության կողմից հաշվապահական քաղաքականության մոտեցումների պահանջները, եթե ստանդարտներով կոնկրետ գործառնության կամ դեպքի մասով հստակ մոտցում չի սահմանված:

(6 միավոր)

Խնդիր 5. Համախմբված ֆինանսական հաշվետվություն:

«Արմ» ընկերությունը ձեռք է բերել «Վրաց» ընկերության բաժնետոմսերի 60%-ը՝ 30.04.2024թ–ին:

- Ձեռք բերման արժեքը կազմել է 2000.000 ՀՀ դրամ:
- Ձեռք բերման ամսաթվի դրությամբ «Վրաց» ընկերության չբաշխված շահույթը կազմում էր 400.000 ՀՀ դրամ, կանոնադրական կապիտալում փոփոխություն չի գրանցված:
- «Վրաց» ընկերությունը 2024թ. հուլիսին իրացում է կատարել «Արմ» ընկերությանը: Գործարքի արժեքը կազմել է 300.000 ՀՀ դրամ, վճարում չի կատարվել:
- 2025թ. մայիսի 20–ին կատարված գույքագրման արդյունքում բացահայտվել է, որ «Արմ» ընկ. պաշարներում առկա է պակասորդ 120.000 ՀՀ դրամի չափով:
- Գուղվիլը արժեզրկվել է 40%-ով:

Ստորև ներկայացված են 31.05.2025 թվականի դրությամբ 2 ընկերությունների ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները.

	«Արմ» ընկ. Հազ.դրամ	«Վրաց» ընկ. Հազ.դրամ
Ոչ ընթացիկ ակտիվներ		
Հիմնական միջոցներ	9.650	1.800
Ներդրումներ	3.150	-
Ոչ նյութական ակտիվներ	800	120
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	13.600	1.920
Ընթացիկ ակտիվներ		
Պաշարներ	220	20
Դրամական միջոցներ	350	50
Դեբիտորական պարտքեր	1.010	395
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	1.580	465
Ընդամենը ակտիվներ	15.180	2.365
Կանոնադրական կապիտալ	5.500	1.040
Զբաղիված շահույթ	4.065	1.088
Ընդամենը կապիտալ	9.565	2.128
Ոչ ընթացիկ պարտավորություններ	1.095	107
Կրեդիտորական պարտքեր	4.540	130
Ընդամենը պարտավորություններ	5.635	237
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	15.180	2.365

Պահանջվում է կազմել «Արմ» և «Վրաց» ընկերությունների համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 31.05.2025թ. դրությամբ, կատարելով համապատասխան հաշվարկները:

(5 միավոր)